Հիմա լավագույն ժամանակն է հայրությունը հաստատելու համար:

Երեխաները երկու ծնողների կարիքն էլ ունեն իրենց ծնվելու օրվանից: Հնարավորին չափ շուտ հաստատեք Ձեր հայրությունը և Ձեր երեխային կյանք մտնելու լավագույն հնարավորությունը տվեք: Ձեր որոշումից Ձեր երեխան կշահի և՛ զգայական առումով, և՛ դրամական, և՛ առողջական:

Հայրությունը հաստատելուց հետո, երկու ծնողներն էլ իրավունք ունեն դիմելու երեխային այցելելու կամ խնամակալության կարգավիճակ ստանալու համար:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա
նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի
առողջապահության և սոցիալական
ծառայությունների գործակալության քարտուղար

Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի՝, Երեխաների օգնության
ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 244 (9/08)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Հայրության հաստատում

Երեխաների օգնության
ծառայությունների
դեպարտամենտ

Ի՞նչ է հայրությունը

Հայրություն նշանակում է երեխայի օրինական հայրը լինելը: Հայրությունը կարող է հաստատվել կա՛մ դատարանում, կա՛մ էլ երբ երեխայի երկու ծնողները հիվանդանոցում լրացնում և ստորագրում են հայրության հայտարարագիրը և այն հաստատվում է նահանգի կողմից:

Ինչպե՞ս է հաստատվում հայրությունը

Ամուսնությամբ

Երբ կինն ամուսնանում է և հղիանում, համարվում է, որ նրա ամուսինը երեխայի օրինական հայրն է, և հայրությունը հաստատվում է ինքնաբերաբար՝ առանց դատարանի միջամտության:

Հայրության հայտարարագիրը

Չամուսնացած ծնողների համար հայրությունը հաստատելու ամենահեշտ եղանակը Հայրության հնարավորության ծրագրի՝ Հայրության հայտարարագիրը (CS 909 ձևը) ստորագրելն է: Այն տրվում է չամուսնացած ծնողներին՝ այն հիվանդանոցում, որտեղ ծնվում է երեխան: Որպեսզի հայտարարագիրն իրավական ուժ ունենա, երկու ծնողն էլ պետք է ստորագրեն այն: CS 909 ձևը կարելի է գտնել նաև երեխաների օգնության տեղական գործակալությունում, քաղաքացիական կացության գրանցման տեղական գրասենյակներում և դատարաններում: CS 909 ձևը պահանջվում է այն դեպքում, եթե հոր անունը պետք է նշվի երեխայի ծննդյան վկայականում:

Դատարանի որոշմամբ

Դատարանը կարող է հաստատվել նաև դատարանի որոշմամբ: Եթե ծնողներից որևէ մեկը գործ է բացել երեխաների օգնության տեղական գործակալությունում, ապա գործակալությունը կարող է դատարան ուղարկել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ստանալ դատարանի որոշումը:

Ի՞նչ է կարևոր առավելություններ է տալիս հայրության հաստատումը

Երեխան շահում է հետևյալ հարցերում՝

- Նա իր երկու ծնողներին էլ ճանաչում է:
- Նա օգտվում է իր ծնողների իրավական փաստաթղթերից:
- Հոր անունը նշվում է ծննդյան վկայականի վրա:
- Երեխան խնամք է ստանում ինչպես մորից, այնպես էլ հորից:
- Հնարավոր է դառնում ուսումնասիրել ընտանիքի հիվանդությունների պատմությունը:
- Առողջության ապահովագրություն, եթե այն տրամադրվում է:
- Ինչպես մորից, այնպես էլ հորից ժառանգություն ստանալու իրավունք:
- Սոցիալական ապահովագրություն կամ վետերանների նպաստ ստանալու իրավունք, եթե այն տրամադրվում է:

Դատարանի որոշմամբ հայրության հաստատումը

Երբ որևէ մեկին հայր են անվանում, նրան իրավական փաստաթղթեր են ուղարկվում՝ հայրությունը հաստատելու և/կամ երեխայի ապրուստադրամի ու առողջության ապահովագրության համար: Այդ փաստաթուղթը կոչվում են «դատականչ- բողոքագիր»:

Դատականչ-բողոքագիրը հանձնվում է այն անձին, որին հայր են անվանում կամ այն անձին, որը նրա անունից իրավասու է փաստաթղթերը ստանալ: Եթե անձը, որին հայր են անվանում, գիտե, որ ինքն է երեխայի հայրը, նա կարող է գնալ երեխաների օգնության տեղական գործակալություն և համաձայնագիր (պարտավորագիր) ստորագրել:

Եթե դատականչ-բողոքագրում նշված անձը համարում է, որ ինքը չէ երեխայի հայրը, ապա նա պետք է փաստաթուղթը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում բողոքի պատասխանն ուղարկի դատարան: Նա կարող է դիմել երեխաների օգնության տեղական գործակալությանը, որպեսզի վերջինս ստուգում անցկացնի և պարզի, թե արդյո՞ք իսկապես ինքն է երեխայի հայրը: Ստուգումն անպայման չի նշանակում արյան հետազոտություն, և այն կարելի է անել արագ ու առանց ցավի:

Այն անձը, որին հայր են անվանում, 30 օրվա ընթացքում պետք է պաշտոնապես պատասխանի դատականչ-բողոքագրին, այլապես դատարանը նրան երեխայի հայր կճանաչի և կարող է որոշել, որ նա պետք է ապրուստադրամ վճարի և երեխային ապահովի բժշկական ապահովագրությամբ: Շատ կարևոր է, որ նա 30 օրվա ընթացքումbe պատասխանի, որպեսզի երեխայի ապրուստադրամի հարցը որոշելիս դատարանը հաշվի առնի նրա եկամուտը և երեխայի հետ անցկացրած ժամանակը: